Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
օգոստոսի 13-ի N 1211 - Ն որոշման

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳԵՏԻ ԱՓԵՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՈՒԹԱԲԱՐՁԻՉ ԵՎ ՀԱՆՈՒԹԱՓՈԽԱԴՐԻՉ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆ ՏԵՂԱՓՈԽՈՂ ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԸ ՋԻՊԻԷՍ (ԳԼՈԲԱԼ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ) ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱՀԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ԱՆԽԱՓԱՆ ՄԻԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, ինչպես նաև օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների ՋիՊիԷս (Գլոբալ տեղորոշման համակարգ, այսուհետ՝ ՋիՊիԷս (GPS)) համակարգով կահավորման, այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու պայմանները:

2. Ընդերքօգտագործողները պարտավոր են օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնել բացառապես սերվերային համակարգին անխափան միացված՝ ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորված հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, ինչպես նաև օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների միջոցով:

3. Սույն հավելվածի պահանջների իմաստով՝ սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում շահագործվող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցները, ինչպես նաև օգտակար հանածո տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները համարվում են ՋիՊիԷս (GPS) համակարգով չկահավորված, եթե դրանց միջոցով իրականացվում է օգտակար հանածոյի արդյունահանում կամ փոխադրում և բացակայում է ՋիՊիԷս (GPS)

համակարգը կամ ՋիՊիԷս (GPS) համակարգը խափանված է, անջատված է, բացակայում է ազդանշանը, խզված է կապը սերվերային ենթակառուցվածքի հետ կամ ապահովված չէ տվյալների իրական ժամանակում փոխանցումը:

4. Սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործողը պարտավոր է դադարեցնել տվյալ տեխնիկական կամ տրանսպորտային միջոցով իրականացվող օգտակար հանածոների արդյունահանման և փոխադրման աշխատանքները: Նշված աշխատանքների վերսկսումը թույլատրվում է միայն համապատասխան հանգամանքի վերացումից և սույն հավելվածով սահմանված պահանջների ապահովումից հետո:

5. Սույն հավելվածի 3-րդ կետում նախատեսված դեպքերում օգտակար հանածոների արդյունահանման կամ փոխադրման իրականացումն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 60.1-ին հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով և չափերով:

6. Յուրաքանչյուր ՋիՊիԷս (GPS) համակարգ պետք է անխափան միացված լինի համապատասխան սերվերային ենթակառուցվածքին, որն ապահովում է.

1) տվյալների շուրջօրյա ընդունում և մշակում,

2) տվյալների մինչև մեկ տարվա վաղեմությամբ պահպանում,

3) լիազորված պետական մարմինների կողմից տվյալներին հասանելիություն կամ սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում պահպանվող տվյալների տրամադրում՝ հարցման հիման վրա՝ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված կարգով:

7. Սույն կարգի իմաստով ՋիՊիԷս (GPS) համակարգը համարվում է առկա և կիրառելի, եթե այն ապահովում է տվյալների ավտոմատ, անընդհատ և իրական ժամանակում արձանագրում ու պահպանում:

8. Սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված պահանջները հանդիսանում են ՋիՊիԷս (GPS) համակարգի առկայության և կիրառելիության անհրաժեշտ պայմաններ:

9. Այն դեպքում, երբ ընդերքօգտագործողը ՋիՊիԷս (GPS) համակարգի տեղադրումը, սպասարկումը և սերվերային ենթակառուցվածքի շահագործումը չի իրականացնում ինքնուրույն, պարտավոր է համապատասխան ծառայություն մատուցող անձի հետ կնքել պայմանագիր՝ օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցները, օգտակար հանածո տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորելու, նշված տեխնիկական և տրանսպորտային միջոցների տեղաշարժն արձանագրող համապատասխան սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու, ինչպես նաև նշված տեխնիկական և տրանսպորտային միջոցների տեղաշարժի արձանագրման մասին մինչև մեկ տարվա վաղեմությամբ տեղեկատվությունը պահպանելու և հարցման դեպքում այդ տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում սույն որոշման N 2 հավելվածով սահմանված մարմիններին տրամադրելու ծառայության մասին:

10. Այն դեպքում, երբ օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձը ՋիՊիԷս (GPS) համակարգի տեղադրումը, սպասարկումը, սերվերային ենթակառուցվածքի շահագործումը, ինչպես նաև տեխնիկական և տրանսպորտային միջոցների տեղաշարժի մասին տեղեկատվության պահպանումը, դրա տրամադրումը և սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիության ապահովումն իրականացնում է ինքնուրույն՝ առանց համապատասխան ծառայություն մատուցող անձի ներգրավման, նշված պարտականությունների պատշաճ կատարումն ապահովում է օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձը:

11. Ընդերքօգտագործողը պարտավոր է անձամբ կամ ծառայություն մատուցող անձի միջոցով վերահսկել և ապահովել սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնող ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորված հանութաբարձիչ, հանութափոխադրիչ տեխնիկա-կան միջոցների, օգտակար հանածո տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների

տեղաշարժի անխափան արձանագրման գործընթացը: Անկախ պայմանագրային հարաբերությունների առկայությունից՝ սույն հավելվածով սահմանված պահանջների չկատարման համար պատասխանատվությունը կրում է ընդերքօգտագործողը:

12. Սույն հավելվածի պահանջների պահպանման պետական վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

14.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ